


АНУШАВАН ЗАКАРЯН. Трагедия армянского народа в оценке русских литераторов. Ереван: МИГА НАН РА, 2003, 286 с.

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ. Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրական գործիչների գնահատմամբ. Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2003, 286 էջ:

Օսմանյան կայսրությունում հայերի Մեծ եղեռնից հետո անցած շուրջ ինը ասոնամյա ընթացքում ինչպես մեղանում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում XX հարյուրամյակի այդ հրեշտակաբարձրության մասին հրատարակվել են ըստ ռուսական ստեղծագործությունների, փաստաթղթերի ժողովածու-



ներ, հուշագրություններ, հրատարակաստական հոդվածներ՝ հայերեն և օտար լեզուներով: Լույս են տեսել անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների պետական արխիվներում պահվող նյութերը Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության մասին: Տարաբախտաբար, քիչ ուղղորդված են արժանացել ինչպես ռուսական արխիվների համապատասխան նյութերի հրատարակումը, այնպես էլ մարդկության դեմ ուղղված այդ

մեծ հանցագործությանը ռուս հասարակության վերաբերմունքի հարցերը:

Այդ բացը զգալի չափով լրացնում է գրախոսող աշխատությունը: Գրքի հեղինակը՝ գրականագետ Անուշավան Զաքարյանը, հեռավորվել է մի նպատակ՝ սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնել ռուս գրական այն գործիչների ծավալած հայանպաստ գործունեությունը, որոնք XX դ. 10-ական թվականներին գտնվել, ապրել ու ստեղծագործել են Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում: Այս կարվածքով էլ նա լուսաբանել է Հայոց ցեղասպանության նկատմամբ ռուս հասարակական-քաղաքական առաջադիմական միտքը ներկայացնող լրագրողների, գրողների, գրականագետների, մշակույթի, նաև պետական այլևայլ ներկայացուցիչների ստեղծած մեր ժողովրդի համար անանց նշանակություն ունեցող արժեքները, բացահայտել նրանց մտերմիկ կապերն ու շփումները Հայ հասարակական-քաղաքական, մտավորական ու զինվորական շրջանների հետ: Ա. Զաքարյանն առաջնորդվել է ռուս գրականության հայտնի պատմաբան, գրաքննադատ, մատենագիր և մանկավարժ Ս. Վենգերովի (1885-1920) այն դրույթով, ըստ որի «միանգամայն գիտական չէ ... գրականությունն ուսումնասիրել միայն նրա խոշոր ներկայացուցիչներով ... Լինում է նույնիսկ այնպես, որ փոքր գրողը ... ավելի վառ է բնութագրում այս կամ այն դարաշրջանը, քան խոշոր գրողը» (էջ Ծ):

Գրքում ըստ արժանիության է դնահատված Հայոց մեծ ողբերգության նկատմամբ ռուս առաջադեմ հասարակայնության դրսևորած մեծագույն հումանիզմը: Հայտնի անունների՝ Յու. Վենգերովի, Մ. Գոր-

կու, Վ. Բրյուսովի, Ս. Գորոդեցկու կողքին շրջանառության մեջ են դրվում նաև քիչ հայտնի անուններ, որոնք անձանոթ են ոչ միայն լայն հանրությանը, այլև մասնագետ գիտնականներին: Գրական գործիչներ, որոնք իրենց բանավոր և գրավոր բողոքի ձայն են բարձրացրել թուրքական գազանությունների դեմ: Այս տեսակետից միանգամայն տեղին է հեղինակի քննադատական խոսքը դաշնակցական ոչ անհայտ գործիչ ու գրող Ավետիս Ահարոնյանի հասցեին, որը «Кавказское слово» թերթի 1917 թ. օգոստոսի 20-ի համարում սպառնալից «Ինչո՞ւ» խորագրով հոդվածում մեղադրում էր ռուսական էլիտային այն բանի համար, որ նա, իբր, քար անտարբերությամբ էր անցնում թուրքիայում կատարվող վանդալիզմի կողքով, այն դեպքում, երբ «ամբողջ կուլտուրական աշխարհը եղբայրաբար արձագանքում էր հայ ժողովրդի տառապանքին» (էջ 5): Ա. Ջաքարյանի գիրքն ամբողջությամբ հերքում է դաշնակցական գործիչ-գրողի տեսակետի կեղծավատիր լինելը: Ո՞վ-ն՞վ, բայց Ա. Ահարոնյանը սլարտավոր էր աչք չփակել հենց միայն այն իրողության առաջ, որ 1916-1917 թթ. «Армянский вестник» շաբաթաթերթում, ուր սպառնալից էր նաև ինքը, թուրքերի վայրագությունները դատապարտող, մերկացնող նյութերով հանդես էին եկել ռուս հասարակական-քաղաքական ու պետական գործիչներ, գրողներ և գրականագետներ, սլատամբաններ ու լրագրողներ:

Արևմտահայության տեղահանության և զանգվածային կոտորածների մասին Ա. Ջաքարյանի մենագրությունը սրտակեզք շատ նյութեր ու վերլուծություններ է պարունակում: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված նյութերը բազմաթիվ ու բազմաբնույթ են: Դրանք արխիվներից, հեղինակավոր թերթերից, հրատարակություններից, հասարակական-քաղաքական ամսագրերից ինստիտուցիոնալ ժողոված և գիտական համալիրությամբ ընտրված ու վերլուծված նյութեր, փաստաթղթեր են, ռուս աստիճանավորների, պարբերականների թղթակիցների հոդվածներ, նամակներ, գրականագիտական հոդվածներ, ակնարկներ ու բանաստեղծություններ: Մեծ հե-

տաքերությունամբ են կարդացվում «Տ. Օլգենինի ժուռնալիստական և հետազոտական գործունեությունը», «Բանաստեղծ-գորավար Ա. Կուլբեյակինը Կովկասյան ռազմաճակատում», «Հայաստանը Ա. Կուլբեյակինի բանաստեղծություններում», «Ա. Կուլբեյակինը և հայ հասարակայնությունը», «Ս. Գորոդեցկու հումանիստական առաքելությունը», «Տ. Օլգենինի «Անհետացող Հայաստան» դասախոսությունների շարքը», «Հայ ժողովրդի ցեղասպանությունը ռուս ժուռնալիստների աչքերով», «Վ. Բրյուսովի դասախոսությունները Հայ պոեզիայի մասին», «Ս. Գորոդեցկու գրական-հասարակական գործունեությունը Անդրկովկասում», «Ս. Թաֆալովիչը Բաքվի իրադարձությունների մասին», «Հայաստանը Բ. Լազարևսկու ստեղծագործության մեջ» և մյուս խորագրերի ներքո հեղինակի ինքնատիպ վերլուծությունները: Հնարավորինս սեղմ անդրադառնալով դրանց:

1912 թ. վերջին – 1913 թ. սկզբին Անդրկովկաս է ժամանում «Новое время», ապա Պետերբուրգի «Виржевые ведомости» թերթի թղթակից, հայտնի հրատարակախոս Անտոնյան-Բերեգովսկի-Օլգինսկին (կեղծանունը՝ Տ. Օլգենին): Նա թիֆլիսում և էջմիածնում դասախոսություններ է կարդում Բալկանյան սլատարագմի մասին, որտեղ շոշափում է նաև Հայկական հարցը, նշելով, որ այն «դառնում է հերթական քաղաքական մի խնդիր, որը Բալկանյան լուծված հարցերից հետո պետք է սահանջի իր լուծումը» (էջ 15): Այնուհետև ռուս հրատարակախոսը մեկնում է Արևմտյան Հայաստան լինում էր գրում, Վանում, Բիթլիսում, Տիւրանակերտում, Սեբաստիայում և ինսպեկտոր: Շուրջ չորս ամիս շրջագայելով Հայաստան և Հայասթափ այս վայրերում, Տ. Օլգենինը ուսումնասիրում է արևմտահայության սոցիալական, անտեսական ու քաղաքական դոգմալիճակը և այդ ամենի մասին սպառնալից տեղեկություններ հաղորդում իր թերթին մի շարք հոդվածներով՝ «Անհետացող Հայաստանը» ընդհանուր խորագրով: Շուտով թուրքական իշխանությունները, լրջորեն անհանդսացած Օլգենինի ծավալած գործունեությունից, նրան մեղադրում են հա-

կաթոլիկական պրոպագանդայի մեջ և առաջարկում հեռանալ երկրից: Վերադառնալով Արևմտյան Հայաստանից, ռուս հրատարակիչները թիֆլիսում և Բաքվում դասախոսություններ է կարդում «Անհետացող Հայաստան» վերնադրով: «Биржевые ведомости» թերթում տպագրված Տ. Օլդենինի հոդվածներն ու թղթակցությունները արագորեն թարգմանվել են Հայերեն և հրատարակվել ժամանակի մամուլում կամ էլ դրանց մասին տպագրվել են ծալալուսն հայտնողներ: Գրված լինելով տեսածի և ասրածի անմիջական տպավորության տակ, դրանք ունեն պատմական վավերագրերի արժեք:

Արևմտյան Հայաստանը, Հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, ավանդույթները շատ հոգեհարազատ էին բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինին: Նա ռուսական րանակի ղորահրամանատարներից էր, մեկն այն գեներալներից, որոնք գործում մասնակցում էին մարտական գործողություններին: Պատերազմի ողջ ընթացքում գեներալի րանաստեղծական սիրտը և հոգին մղկտում էին «մինչև վերջ ավերված ու մահով հագեցած» պատմական Վանի վրատակներում: Ուստի պատահական չէ, որ թիֆլիսում 1917 թ. տպագրված «Մհերի դուռը: Վանի արձագանքները» գիրքն իր խորթթախանցումը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Կովկասյան ճակատի, մասնավորապես Վանի ուղղությամբ կատարված մարտական գործողությունների լուսաբանման տեսակետից: Ուշագրավ են տեսածի և լսածի պոետական տպավորությունների անմիջական ներշնչանքով գրված նրա բանաստեղծություններից «Հին Վանը», «Վանի սլաշտպանությունը», «Վանի անկումը», «Ավերված Վանը», «Բին-Դիմախում» (գետ Վասպուրականում), «Ուրախացող Վանը» և մյուս բանաստեղծությունները: Կովկասից ռուսական բանակի հեռանալուց հետո մնալով Անդրկովկասում, ասրելով թիֆլիսում, Ա. Կուլեբյակինն ակտիվորեն մասնակցել է հասարակական-քաղաքական, գրական կյանքին, մասնավորապես Հայ հասարակությանը հուզող կարևոր հարցերի ու խնդիրների լուծմանը: Նա բարեկամական, ընկերական հա-

րաբերություններ է ունեցել, աշխատել Հայ մշակույթի, գրականության, հասարակական-քաղաքական, զինվորական բազում նշանավոր գործիչների հետ: Առանձնապես մտերիմ է եղել Հայ բանաստեղծության հասարակ շուկ. Թումանյանի հետ: Անգնահատելի է հատկապես նրա կատարած աշխատանքը «Համաշխարհային պատերազմում Հայ ժողովրդի կրած վնասների քննիչ Հանձնաժողովում» որպես ռազմապատմական բաժնի վարիչ և «Մայրլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբում»:

Մոտիկից ծանոթանալով Հայ իրականությանը և խորապես վերապրելով Հայոց ողբերգությունը, ռուս գրողները, հանուն արդարության, բողոքի իրենց ձայն են բարձրացրել, առավելագույնս նպաստել Հայկական Հարցի և աննախընթաց ողբերգության մասին ճշմարտության տարածմանը: Նրանց բոլոր ստեղծագործությունների միջով անցնում են ցայն ու անհանգստությունը Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ և ձգտումը հայրենակիցների մեջ սեր ու կարեկցանք արթնացնել նրա նկատմամբ: 1915 թ. Կովկասյան ռազմաճակատ է գալիս բանաստեղծ Վասիլի Նեմիրովիչ-Դանչենկոն՝ թատերական հայտնի գործիչ Վլադիմիր Նեմիրովիչ-Դանչենկոյի եղբայրը, որոնց մայրը հայուհի էր: Ռուսական գործերի դրաված արևմտահայկական տարածքներում նա ականատես է լինում թուրքական բարբարոսությունների ծխացող հետքերին: Արևմտահայերի ողբալի վիճակի հանդեպ հարազատի կարեկցությամբ են լեցուն նրա այն բանաստեղծությունները, որոնք տպագրվել են «Русское слово» և «Армянский вестник» պարբերականներում: Մարտիրոսովող ժողովրդի նկատմամբ տաղնապով ու կարեկցանքով են գրված բանաստեղծի «Հանուն ինչի», «Եփրատի ափին», «Դրոշ» բանաստեղծությունները, ուր հեղինակը զայրույթով մեղադրում է հետադիմական և մեծապետական շովինիստներին, որոնք անտարբեր են հարուստ պատմության և մշակույթի տեր ու «առաքելական մահապատիժ» նախընտրած Հայ ժողովրդի հոգսերի և վշտերի նկատմամբ:

1914 թ. նոյեմբերից, երբ Կովկասյան ռազմաճակատում սկսվեցին պատերազմա-

կան գործողությունները, որպես ռազմական թղթակիցներ Թիֆլիս եկան և մարտական տարբեր տեղամասեր մեկնեցին ռուսական մամուլի խոշորագույն թերթերի թղթակիցներ Ն. Աչեչովը, Ս. Պոլյակովը, Ֆ. Կրյուկովը, Ի. Յասինսկին, Ալ. Վոզնեսենսկին և շատ ուրիշներ: 1915 թ. աշնանից Կովկասյան ռազմաճակատում էր գտնվում դրական և հասարակական գործիչ Արիագնա Տիրևովան (գրական կեղծանունը՝ Ա. Վերգեծսկի), որի հոդվածները լույս էին տեսնում «Кавказское слово» թերթում: 1916 թ. նա հրապարակեց թուրքիզմն ու երիտթուրքերի քաղաքականությունը մերկացնող «Հին թուրքիան և երիտթուրքերը: Մեկ տարի Կոնստանդնուպոլսում» գիրքը: 1915-1916 թթ. հայ ժողովրդի ողբերգություն մասին հոդվածներով հանդես եկան գրող, ռուսական մի շարք առաջատար թերթերի թղթակից Վ. Վոգոլովովը, Արևմտյան Հայաստանում «Русские ведомости»-ի թղթակից և ռազմական թարգմանիչ, Հագարյան ճեմարանի պրոֆեսոր, հետազոտում Հայտնի արևելագետ, ակադեմիկոս Վլադիմիր Գորգլեսկին, սլետական և հասարակական Հայտնի գործիչ, երրորդ Պետական դեմաժի նախագահ, հրապարակախոս Ալեքսանդր Գուչկովը և շատ ուրիշներ:

Ա. Զաքարյանի մենագրությունում ցույց է տրված, որ XX դ. 10-ական թվականների ողբերգական հայ իրականությունը շատ ծանր են վերապրել նաև ռուս այլ գրողներ, շատ լրագրողներ, որոնք իրենց ստեղծագործություններում պատկերել են արևմտահայության Գորդոթան, ավերված ու ամայացած հայրենիքի սրտակեղծ տեսարանները: Դրանցից են Ալեքսանդր Կուչկովի «Վանի դագեյ», «Ավերված Վանը», Սերգեյ Զարովի «Հայ եղբայրներին», «Մի լացիլը աշուղ», «Քեռու մահը», «Խավարից», Եկատերինա Ալեքսեևայի «Աշուղի երգը», «Ինչու», «Մայր Հայաստան», «Լուսաբաց», Սերգեյ Կրոտկիի «Հրամեշտ», «Հանուն հայրենիքի երջանկության», «Հայուհու օրորոցային երգը», «Ողջուն Հայաստանին», Կոնստանտին Սայանսկու «Հայաստան», «Ձոհերի շքերթը», «Մոռացվածը» և այլն:

Ռուս ստեղծագործ մտավորականութան ներկայացուցիչները ամեն կերպ ձգտել են օգնել հայ ժողովրդին, թեթևացնել գաղթականներին և որբերին բաժին ընկած ծանր վիճակը: Այսպես, Հայտնի է, որ մեծ գրող Լև Տոլստոյի աղջիկը՝ Ալեքսանդրա Տոլստայան, «Համառուսաստանյան զեմսովային միության բժշկասնդական ջոկատի» կազմում, որպես գլխավոր քույր, դալիս է Իգդիր: Ականատես լինելով սարսափների տեսարաններին, նա «Русские ведомости» պարբերականին է ուղարկում «Հայ դաղթականները» վերնագրով հոդվածը: «Ինձ երբեք չի վիճակվել տեսնել նման տառապանքներ: Այդ մարդիկ զրկվել են ոչ միայն իրենց ընտանիքներից, հարազատներից, մերձավորներից. նրանք զրկվել են ընտանեկան ծածկից, իրերից, զրկվել են ամեն ինչից» (էջ 82),— գրել է նա 1915 թ. հունվարի 26-ին Իգդիրից: Ալ. Տոլստայան այնուհետև մեկնում է Վան, կապեր հաստատում ամերիկյան միսիոներների հետ և նրանց համագործակցությամբ օգնում կոյստյան մատնված բնակչությանը: Հայ գաղթականների նկատմամբ ցուցաբերած իր անշահախնդիր գործունեությունը և անխոնջ աշխատանքի համար նա պարգևատրվում է «Գեորգիևյան մեդալով»:

Գրքում առանձնահատուկ տեղ է տրված հայ իրականության հետ ռուս նշանավոր գրող Վալերի Բրյուսովի առնչություններին: Քաջ Հայտնի է, որ այդ մասին զրկվել են բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, արձարծվել և լուսաբանվել են այդ կապերը ողջ լայնությունում ու խորությունում: Թվում է, թե այդ մասին այլևս նոր խոսք հնարավոր չէ ասել: Բայց արի ու տես, որ Ա. Զաքարյանն այլ շեշտադրումով է մոտեցել հարցին և ներկայացրել է Վ. Բրյուսովի շիրուները հայ իրականության հետ հենց Անդրկովկասում: Բաքվում, Թիֆլիսում, Երևանում և էջմիածնում: Հայտնի է, որ Մոսկվայի Հայկական կոմիտեի առաջարկությամբ 1915 թ. ձեռնամուխ լինելով «Հայաստանի պոեզիա» ժողովածուն կազմելու և խմբագրելու աշխատանքներին, դրան զուգընթաց նա լայն գործունեություն է ծավալել հայ բանաստեղծությունը ռուս և հայ հասարակայնության մեջ տա-

րածելու ուղղությամբ: Այդ նպատակով 1915-1917 թթ. նա Հայաստանի մշակույթի և պատմության մասին բազմաթիվ դասախոսություններ է կարդացել ոչ միայն Մոսկվայում, այլև Անդրկովկասի վերոհիշյալ քաղաքներում: Հայ ժողովրդի համար բովանդակալից տարիներին այդ դասախոսությունները, «Հայաստանի պոեզիա» ժողովածուն (1916 թ.), հայ ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի մասին ուսուցանասանձիղ մտտեցումները և արծարծած դադարները ոչ միայն հասարակության կողմից ընդունվել են մեծ ոգևորությամբ, այլև կարևոր իրադարձություն էին երկու ժողովուրդների՝ Հասարակական-քաղաքական կյանքում: Ի դեպ, «Հայաստանի ապագա պոետների խնդիրները» հոդվածում նա դատաարարակ է իմպերիալիստական պատերազմը («այն սանձից խոշտանված Հայաստան»), մերկացրել Գերմանիայի քաղաքականությունը, քանզի նա աջակցում և ոգեշնչում էր աբդուլհամիդյան և երկաթուղային ոճրաբանական ոճրաբաններին:

Գրքում ըստ արժանիության են դնահատված ուսուցանասանձիղ, հրապարակախոս, հասարակական գործիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Սիրվեյ Գորոզեցիու գործունեությունն ու ստեղծագործությունը: Ս. Գորոզեցիու մասին ևս գրվել են պրքեր, բազում հոդվածներ և հուշագրություններ: Գրախոսող պրքի հեղինակը, չկրկնելով նախորդների կուտարած աշխատանքը, նոր վրաստերի ու նյութերի հիման վրա հանդամանորեն ներկայացրել է 1916-1921 թթ. ուսուցիչի հասարակական-քաղաքական, գրական-մշակութային լայնածավալ գործունեությունն Անդրկովկասում: Ինչպես վրաստացի վկայված է, այդ տարիներին նա եղել է Վանում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, ուղևորվել հետևել է հայ ժողովրդի պատմական ճակատագրին, Հայաստանում կատարվող դեպքերին, հրկրի ներքին ու արտաքին իրավիճակին, հրապարակալ իր ճայնը բարձրացրել ի պաշտպանություն բազմաչարչար հայ ժողովրդի, Հայկական Հարցի արգարացի լուծման: Բացի դրական գործերից, որոնք լայնորեն հայտնի են հայ և ուսուցանությունը, Ա. Գորոզեցիին նաև հայ ժողովրդի, Հայաստանի, Հայկական Հարցի մասին 1918-1919 թթ. գրել է հրապարակախոսական տասնյակ հոդվածներ, հանդես եկել զեկուցումներով: Խոսում են դրանց վերնագրերը («Ժանդոտ վետերներ», «Pro Armenia», «Նոր վերք», «Կենդանի գերեզմանոց», «Մի քիչ զուբրոզիա», «Պսակ բարեկամներին», «Հայաստանի աղետները», «Ղարաբաղ», «Վերջին ճիչը» հոդվածները և Բաթում քաղաքում «Հայկական Հարց» վերնագրով կարդացած զեկուցումը), լավատեսական, իմաստալից ու կենսահաստատ եզրահանգումները: Խոսու հրապարակախոսը ողջ հոդով հավատում է հայության վերածնությունը և հայ ժողովրդին ուղղում է հուսադրող, քաջալերիչ խոսքեր: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Զաքարյանը, Հայաստանի և Հայկական Հարցին նվիրված հրապարակախոսությունը Ս. Գորոզեցիին ընթերցողի առջև հանում է իբրև ուսուցիչի խիղճ: Խիղճ, որի հետ հրապարակախոսը երբեք գործարքի չդնաց, և դա այն ժամանակ, երբ ամեն ինչ քաղաքականացված էր:

Քննվող ժամանակաշրջանում Անդրկովկասում գրական-հասարակական բուռն գործունեություն է ծավալել նաև բանաստեղծ, դրամատուրգ Սիրվեյ Ռաֆայելիչը: Գրքում մասնավորապես նա ներկայացված է Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան դեպքերի առնչությամբ գրած հոդվածով, նաև դրանց մասին համալիրահայտնի պատերազմի ժամանակ հայերի նկատմամբ կատարված բռնարարքները հետաքննող հանձնաժողովի կողմից նրա հարցաքննության արձանագրությունը: Այդ նյութերը, լինելով անկողմնակալ ակնաստեսի վկայություններ, պատմական վավերագրերի արժեք ունեն: Դրանք մեկ անգամ ևս գալիս են հաստատելու այն իրողությունը, որ Բաքվի կոմունայի անկումից, Բաքուն թուրքական գավթիչների կողմից գրավվելուց և մուսավաթական կառավարության ստեղծումից սկսած հայ բնակչության նկատմամբ իրականացվել է մտածված և սլանավորված ջարդ ու կողոպուտ:

Հետաքրքրություն են ընթերցողի նաև հեռավոր Սիբիրից գերյալ հայ գինվորներից կազմված վաշտի հետ Հայաստան

և նաև հեռավոր Սիբիրից գերյալ հայ գինվորներից կազմված վաշտի հետ Հայաստան

ժամանած և ազգային-ազատագրական շարժման լեգենդար Հերոս Անդրանիկի գնդի կազմում ռազմաճակատ մեկնած բանաստեղծ Պյոտր Սիրիբցևին և սրբուհիկ Ալեքսեյ Կոլմակովին նվիրված էջերը: Վաչտի մարտական ուղին մանրամասն լուսաբանված է վերջինիս «Պատմական Հայկական վաշտը» ակնարկաչառում, որը նա գրել և հրատարակել է 1919 թ. Բաքվի «Наше время» թերթում: Ա. Ջաքարյանը գրքի այս բաժնում ցույց է տվել, թե ինչպես ոուս մարզիկ՝ Ա. Կոլմակովը և Պ. Սիրիբցևը, գեներով ու գրչով սլաշապանելով Հայ ժողովրդի արդար գործը, հավատարիմ մնացին ոչ միայն իրենց զինվորական պարտքին, այլև ոուս մտավորականի մարդասիրական էությունը:

XX դ. 10-ական թվականներին ոուս գրական գործիչների շարքում իր ստեղծագործություններում Հայ իրականության բազմազան կողմերի ներկայացմամբ առանձնանում է ժամանակի Հայտնի բելլետրիստ Բորիս Լազարևսկին: Նորահայտ

նյութերի հիման վրա գրախոսվող գրքի հեղինակը ցույց է տվել վերջինիս կապերը Հայ իրականության հետ, որոնք արտացոլվել են նրա գրական-հասարակական ակտիվ գործունեության մեջ: Մասնավորապես հանգամանորեն ներկայացված ու մեկնաբանված են Թիֆլիսում և Երևանում նրա կարդացած դասախոսությունները՝ «Հայաստանի աղջիկներն ու կանայք» թեմայով:

Ամփոփելով մեր ասելիքը Անուշավան Ջաքարյանի մենագրության մասին, չեչտենք, որ միանգամայն ողջունելի են հեղինակի կատարած սլաշապանասիրական բոլոր դիտարկումները: Անվարան կարելի է ասել, որ այն նոր ու թարմ իտսք է քննվող Հարցի ուսումնասիրության սոսպարեզում: Մենագրության դիտաքաղաքական ուղղվածությունն ակնհայտ է՝ բարենպաստել Հայ և ոուս ժողովուրդների բարեկամության ու փոխըմբռնման խորացման ցանկալի նպատակին, միշտ անաչառ՝ ընդհան կեղծարարություն:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԻԱՆՅԱՆ